ՀԵՂԻՆԱԿԻ ԿՐԿՆՈՐԴԸ ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ «ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՈՒՄ»

Մ. Գ. ՋԱՔԱՐՅԱՆ

Ավ. Իսահակյանի «Հիշատակարանում» ի մի են բերված գրողի շուրջ 65 տարիների (1891—1956 թթ.) գրառումները։ Չնայած Վարպետը օրագիր է ունեցել միայն ուսանողական տարիներին (1891—1895 թթ.), սակայն կյանքի օրագիր ունենալու նրա երազանքը սիրով և պատասխանատվության մեծ զգացումով իրականացրել է գրականագետ Արամ Ինճիկյանը։ Նա այլևայլ տարիների տետրերից, ծոցատետրերից և գրառումներից ամբողջացրել է «Հիշատակարանը»[1], ուր 16-ամյա պատանու շարադրանքը ավարտին է հասցնում 81-ամյա ստեղծագործողը։ Ավ. Իսահակյանի կյանքը համընկավ XIX դ. վերջի XX դ. կեսի հայ կյանքի քաղաքական դժվարին ու ծանր ժամանակներին։ Ցարական Ռուսաստանի և սուլթանական Թուրքիայի վարած հայակործան քաղաքականության հետևանքով 1915 թ. Արևմտյան Հայաստանը դատարկվեց իր բնիկ բնակիչներից, իսկ Արևելյան Հայաստանում 1918—1920 թթ. կենաց-մահու պայքարով ժողովուրդը նվաճեց գոյատևման իրավունք։ 1917 թ. բոլշևիկյան հեղափոխությանը հաջորդած ռուս-թուրքական կարմիր դաշինքը, սակայն, նորաստեղծ Հայաստանի Հանրապետությանը պարտադրեց խորհրդայնացում։ Բրեստ-Լիտովսկից ծայր առած Հայաստանի անդամահատման համաձայնագրի տրամաբանական շարունակությունն էր Նախիջևանի և Ղարաբաղի բռնակցումը Խորհրդային Ադրբեջանին։ Վերջնականապես հայրենիքում հաստատված գրողը 1936-ից ականատես էր դարձել ստալինյան բռնարարքներին, որոնց զոհը դարձան գիտության ու մշակույթի նշանավոր դեմքեր, այդ թվում իր կրտսեր գրչակիցները՝ Ե. Չարենցը, Ակ. Բակունցը, Զ. Եսայանը, Վ. Թոթովենցը։ 1941—45 թթ. Հայրենական պատերազմից արնաքամ իր ժողովրդի զավակներին սպասվում էր սիրտ մորմոքող նոր անակնկալ. «ժողովուրդների հոր» թելադրանքով տիրուքահայության դեպի Խորհրդային Հայաստան ձգվող քարավանի երթը ավարտվեց Ալթայի երկրամասում։

Վարպետի կյանքի մայրամուտը համընկավ XX դ. 50-ական թվականներից ծայր առած ստալինյան սպանդը դատապարտող քաղաքական առաջին ելույթներին։ Եվ այսպես, «Հիշատակարանի» կենտրոնում այսօրինակ քաղաքական ծանր ու դժվարին ժամանակահատվածում ապրած գրողի ես-ն է, մարդկային անհատական նկարագրով, սիրով ու տառապանքով, հետաքրքրություններով, ստեղծագործական, փիլիսոփայական խորհրդածություններով, ժողովրդի թափած արյան համար ըմբոստ ծառացումներով։ Այս առումով էլ «Հիշատակարանը» յուրովի բանալի է՝ հասկանալու համար Իսահակյան-մարդուն, քաղաքացուն ու ստեղծագործողին։ Հեղինակը ամենայն անկեղծությամբ թղթին է հանձնում իր հոգևոր աշխարհը՝ մտորումների, խոհերի, զգացածի ու վերապրածի անընդգրկելի ծիրը՝ կյանքի, գոյության իմաստի մասին մտորումներից մինչև տիեզերքի խորին խորհուրդները ձգվող, հավերժության հետ զրույցի բռնված նրա մտքի սլացքը։ Մարդկային խառնվածքով շրջահայաց ու զգուշամիտ՝ Վարպետը ոչ բոլոր դեպքերում էր հայրենի երկրի ու ժողովրդի ճակատագրին առնչվող մտորումները նույն անկեղծությամբ պահ տալիս օրագրին, և նման դեպ-

---

1 Ավ. Իսահակյան, Հիշատակարան (այսուհետև՝ Հ), Երևան, 1977։ Էջերը կնշվեն բնագրին կից։

քեռում արդեն շարադրանքը ներկայանում է եզովպոսյան լեզվով կամ՝ հարուստ կախման կետերով, խոր ենթատեքստով, բնագրի երկակի ընթերցումներով։ Նման գրառումները գերիշխող են նրա՝ 1926 թ. հայրենիք կատարած առաջին այցելությունից սկսած։ Մինչև առաջին օրագրային էջերում 16-ամյա պատանին, անդրադառնալով կյանքի ու գոյության իմաստի սեփական ըմբռնում-պատկերացումներին, որ հասարակությանն ու մարդկությանը ծառայելուն էր վերաբերում, ամենայն անմիջականությամբ ու պատանեկան խանդավառությամբ խոստովանում է. «...Ես պետք է սիրեմ մարդկությունը, որ նորա համար բարերար հանդիսանամ, որ նորա առաջ իմ սիրով (չէ՞ որ սերը ազնվացնող, կրթիչ բնավորություն ունի) բանամ ցանկալի աշխարհի դռները—ուրեմն աշխատե՛լ, անվե՛րջ աշխատել հօգուտ հասարակության-մարդկության...» (Հ, 21)։

Կյանք մտնող պատանու սեփական գոյության բարձրագույն նպատակը հանգում է մարդկությանը ծառայելու վեհ գաղափարներին, և այն էլ 16 տարեկան հասակում։ Նմանօրինակ մեծ մղումներն ու ձգտումները, այլասերության և աշխարհասիրության խոր լիցքով, բնորոշ է եզակի ընտրյալներին, վերին շնորհքով օժտվածներին միայն, որոնք ծնվել են իրենց հոգու անափ ջերմությունն ու լույսը աշխարհի մարդկանց նվիրաբերելու առաքելությամբ։ Սա ըստ էության նաև Գևորգյան ճեմարանի ուսանողի քրիստոնեական-ավետարանական սիրուց ծայր առնող մտայնություն էր, միաժամանակ՝ «Սիրեցեք զմիմեանս»։ Տարիների, ապա տասնամյակների հետ դա վերածվում է որոշակի ու կայուն գաղափարախոսության, որը մարդկային աղճատված հոգեբանության «ախտահանումը» առնչում է սիրուն՝ սերը կփրկի աշխարհը։ Պատանու որոնող ու պրպտող միտքն ու նրան զբաղեցնող հարցերի շրջանակը շատ էին լայն ու ընդգրկուն. «Ես ի՞նչ եմ, ի՞նչ... ի՞նչ է կյանքը,... ի՞նչ է կյանքի իդեալը... մա՛րդ, ի՞նչ բան է այս» (Հ, 20—21)։ Այս հետաքրքրասիրության անընդգրկելի ոլորտում յուրաքանչյուր հարցի պատասխանն ինքնին ենթադրում էր իմացության նոր աստիճան, և նրա որոնումները հիշեցնում են Հայնեի «Հարցեր» բանաստեղծության քնարական հերոսի՝ մարդու տեղի, դերի, կոչման մասին խորհրդածությունները։ Մարդու՝ տիեզերական այդ առեղծվածի, դարեր ի վեր լուծում փնտրող հարցերն են դրանք.

Ասացեք ինձ ի՞նչ է նշանակում մարդ,
Որտեղի՞ց է նա, ո՞ւր է գնում,
Եվ ո՞վ է ապրում աստղային կամարի վրա[2]։

Բնականաբար, էջմիածնի սահմանափակ միջավայրը ի վիճակի չէր բավարարելու բազմակողմանի հետաքրքրասիրությամբ օժտված տաղանդավոր պատանուն։ Օրագրի առաջին իսկ էջերում եթե նա մի դեպքում ներքին ծանր տագնապ ու խռովք է ապրում բնատուր տաղանդի օժտվածության համար՝ «Ա՜խ, ես ե՞րբ պետք է համոզվեմ, որ իսկապես տաղանդ ունեմ...» (Հ, 21), ապա այլ պարագայում արդեն ինքնավստահ կեցվածքով հավաստում է «Ես հենի եմ» (Հ, 95), և կյանքի նպատակը առընչում գիտության միջոցով մարդկության բարօրությանն ու առաջընթացին ծառայելու վեհ գաղափարին։ Այս են հավաստում «Հիշատակարանում» իբրև երգում հնչող հետևյալ տողերը. «Ես երդվում եմ իմ դավանած սրբություններով՝ իմ կամքի հզոր ուժով հաղթել արգելքներին և խոչընդոտներին. արհամարհել աշխարհային թովիչ կյանքը, նրա փառքն ու պատիվը՝ միայն այն վեհ սեղանի համար, որի վրա բարձրանում է գիտության անհաղթ, սուրբ, անմահ ու ճշմարիտ դիտությունը. զոհել ամեն ինչ և մտնել այդ վսեմ դրոշակի հովանավորության ներքո. սիրել գիտությունը և

[2] Ф. И. Тютчев, Лирика, т. II, М., 1956, с. 62.

ապրել գիտությամբ... Թո՛ղ իմ կյանքը լինի գիտության համար..., Ահա՛ իմ կյանքի միակ նպատակը» (Հ, 32)։ Մարդասիրական բարձր մղումների, վեհ նպատակների ծառայելու կոչված այս խոստովանանքը հիշեցնում է «կենսական ծովի հուլղերի միջին» բանաստեղծության քնարական հերոսի նույնօրինակ պահվածք-կեցվածքը՝ սեփական ուժին ինքնավստահ, փոթորկի գոռ ալիքների արհավրալից տեսքին ու ձայնին անտարբեր։ Այնուամենայնիվ, հանրությանը ծառայելու կոչված գրողի՝ գիտության տեղի ու դերի մասին խորհրդածությունների ակունքները, դարերից եկող խորապես ազգային, դեռևս քրիստոնեություն նոր ընդունած ժողովրդի մտայնության արյամբ ու դենի հոգեհարազատությամբ հանդերձ, օրագրում, թվում է, ներկայանում է որոշակի ազդվածությամբ։ Այն նկատելի է դառնում 1891 թ. դեկտեմբերի 26-ի գրառման մեջ՝ փիլիսոփա Ֆ. Բեկոնի անվան հիշատակումից, չնայած գրառումը անավարտ է. «...ճիշտ է ասում Բեկոնը...» (Հ, 25)։ Նախորդ, ընդամենը երկու օր առաջ կատարված գրառման մեջ (1891 թ. դեկտեմբերի 24, Գևորգյան ճեմարան) դատողությունները բնության և մարդու փոխհարաբերությունների շուրջ, ինչպես և նշված հարցում վերջինիս ունեցած տեղի ու դերի մասին մտորումներում, նկատվում է նշանավոր մտածողի պաշտպանած դիրքորոշման հակվածությունը։ Հայտնի փիլիսոփա ու գիտնական, Վ. Շեքսպիրի, Ջ. Բրունոյի ու Գ. Գալիլեյի ժամանակակից Ֆ. Բեկոնը (1561—1626) վաղ տարիներից հետևյալ հեռահար նպատակն էր հետամտում. «...որպեսզի այն (գիտությունը— Մ. Ջ.) նպաստի մարդու հզորության մեծացմանը և հաստատվի նրա իշխանությունը բնության վրա...»[3]։ Պատանի Իսահակյանի որդեգրած կողմնորոշումը որոշակիորեն կրում է միջնադարյան մտածողի ազդեցությունը, որը շարադրված է նրա «Աստվածային և մարդկային գիտելիքների առաջընթացի և վերառաջադիմության մասին Ֆրենսիս Բեկոնի երկու գիրքը» աշխատության մեջ։ Պաշտպանած տեսակետի ներգործուն վկայությունն է Իսահակյանի հետևյալ հայտնապնդումը. «Ա՜խ ինչո՞ւ պիտի մարդը բնության կամայականությանը խոնարհվի. ամոթ չէ՞ մարդկությանը. ինչո՞ւ չենք կռվում բնության կապիտ, վնասակար, իշխող, բռնակալ ուժերի դեմ...» (Հ, 23)։ Պատանին առաջնորդվում էր նշանավոր գիտնականի հանրահայտ սկզբունքով, ըստ որի, «կարող ենք ստույգ այնքան, որքան գիտենք», և այստեղ էլ տեղին է մտաբերել 19-ամյա Իսահակյանի հետաքրքրության ոլորտը՝ հոգեբանություն, փիլիսոփայություն, պատմություն, լեզվաբանություն, աստվածաբանություն, քաղաքականություն, «...բարոյագիտությունից և շատ շատերից, մի հարցը հազար հարցերով ճյուղավորվում է... իսկ հետաքրքիր միտքը ստիպմունքով պատասխան է ուզում» (Հ, 44—5)։ Եվ, այնուամենայնիվ, Լայպցիգի համալսարանի ազատ ունկընդիր, աշխարհահռչակ ֆիզիոլոգ, հոգեբան, ֆոլկլորիստ Վ. Վունդի, տնտեսագետ Կ. Բյուխերի մոտ կրթություն ստացած Ավ. Իսահակյանի գիտակցական նման լայն ծանոթությամբ հանդերձ, փորձենք ծանոթանալ նշված գիտությունների՝ մասնագիտական, խորքային իմացությանը, ասենք «փիլիսոփայություն» առարկայից. «Հազարավոր շատ դժվար հարցերի հետի միջի այլոց պիտի շատ մեծ ուշք դարձնեմ հետևյալների վրա—ի՞նչ է Նիրվանան (Oldenberg, Budda), ի՞նչ է կամքը (Schopenhauer), ի՞նչ է Պլատոնի սերը (Պլատոն, Մանտեգացցա, Դրումոնդ), ի՞նչ է բնազդումը (Hartman), ի՞նչ է հարգանքը, սերը, ատելությունը, ոգևորությունը.... (Spinosa' Leibniz, Spenser, Wundt, Paulsen), ի՞նչ է ետը, ալտրուիզմը, էգոիզմը, ի՞նչ է հոգին, զգացմունքը, միտքը, ցանկանալը (Wondt, Spenser), ի՞նչ է պոեզիան, էսթետիկան, լոգիկան (Hegel. Vischer), ի՞նչ է արհեստ, կուլտուրա. ի՞նչ է բնությունը, գեղեցկությունը, առողջությունը» (Հ, 130)։ Զմո-

[3] М. Н. Мельвил, Френсис Бэкон, М, 1961, с. 5.

ռանանք նշել, որ այս ամենը օրագրի հեղինակը յուրացնում էր «իր խելքով» միայն խորը հասկացած (Հ, 45)։ Սա հայ գրականության ամենակարդացած գրողի երիտասարդ տարիների զուտ փիլիսոփայական հետաքրքրությունների ոլորտն է, այսինքն՝ մասամբ մասնագիտական (ի՞նչ է պոեզիան, էսթետիկան), որին հետագայում ավելանում է էքզիստենցիալիզմը։ Խաչակյանի հոգուն համահունչ էին և Ս. Կիերկեգորի գոյության փիլիսոփայությունը, և Ժ. Սարտրի «լրիվ մենակ»[4] սեփական ճակատագիրը տնօրինելու մտայնությունը։

Համաշխարհային փիլիսոփայական մտքի նման իմացությամբ էլ, բոլոր գեպքերում, օրագրի հեղինակը միշտ պաշտպանում է սեփական հայեցակետը, հակադրվում, մերժում կամ ընդունում որոշ վերապահությամբ։ Թերևս այդ մտածողների մտքին հավասար մեկը իրավունք կվերապահեր իրեն նման հետևության հանգել. «L. Büchner -ի ժամանակ է հրապարակել, որ Darwin -ից է ստացել, որի մեջ հանճարը զլում է, որ 40-ամյա գիտական ուսումնասիրությունը նրան ամիրզամի է տարել, այնինչ Դարվինը հայտնի է այպես դեիստ» (Հ, 182)։ Գիտական իմացության բարձր ոլորտներ նվաճած երիտասարդ Խաչակյանը, այնուամենայնիվ, բաղմիցս դժգոհում է անձնական, հատկապես սոցիալական հանգամանքներից, որոնք պատճառ են դարձել և արգելակել իր կայողությունների ըստ ամենայնի ամբողջական բացահայտմանը։ Ուսանողական տարիների նյութական անապահով վիճակը, կորցրած մեծ սիրո համար՝ ապրած տվայտանքը, բանտարկությունները որոշակիորեն խոչընդոտել են նրա գիտական, ստեղծագործական առաջընթացին։ Նման ինքնախարազանող տրամաբանությամբ է շնչում հետևյալ էրառումը. «20 տարեկան հասակից մինչև հիմա հոգեպես նահանջել եմ, և տաղանդս, որ իսկապես ունեի ես, այլասերվեց, հեռացիմեց, ոչնչացավ... չեմ կարողացել եռանդուն պարապել... արտասահմանի քաղցած կյանքս. բանտի սոսկալի կյանքս մի-մի տրագեդիաներ են...» (Հ, 242—243)։ Սա ըստ էության հայրենիքից ուսման մեկնած նրա բոլոր ուսանողական ընկերների՝ «տնտեսական ձախորդ հանգամանքներով» պայմանավորված կյանքի վավերագիրն է միաժամանակ, ուսանողներ, որոնք դարձան հայ մշակույթի և գրականության լուսավոր դեմքերը՝ Մ. Արեղյան, Հ. Մանանդյան, Լ. Շանթ և ուրիշներ։

Օրագրի առաջին էջերից հեղինակի կրկնորդը ներկայացնում է սեփական հոգևոր ներաշխարհը, հաճախ էլ զգացած-վերապրած հակադիր զգացմունքները քննող-վերլուծող կեցվածքով։ Ինքնաճանաչման ձգտող նրա ես-ի համար սեփական անհատական խառնվածքի ու նկարագրի ծանոթությունը («ծանիր զքեզ»), կամուրջ էր դեպի մեծ աշխարհի՝ տարբեր տարիքի, սեռի, հանգամանքների տեր մարդկանց ճանաչողությունը, քանի որ յուրաքանչյուր անհատ ուրույն, ինքնատիպ հոգեբանություն ունի, մարդկային խառնվածք ու նկարագիր։

Ըստ էության, արվեստագետին զբաղեցնում էր մարդ-արարածի բազմակողմանի հարուստ ու բազմազան աշխարհի իմացությունը, այն էլ ոչ ժամանակային որոշակի կտրվածքով, այլ՝ դարերի հետ փոփոխվող մարդուն ու մարդկությունը։ Նման տրամաբանությամբ է պայմանավորված հեղինակի շարադրանքի հետևյալ եզրակացությունը՝ XX դարասկզբի մարդ-էակի ակնհայտ նյութամոլ-նյութապաշտ ձգտումներով. «Հին ժամանակ փիլիսոփաները, կրոնատուները, օրենսգետները հավատում էին իրենց ասածին և ապրում էին այնպես, ինչպես իրենք էին քարոզում։ Այն ժամանակվա երգիչները ոգևորված մարդիկ էին, որ արդարև սերունդներ էին կրթում։ Փողը, որ այժմ մի մեծ մոտիվ է մարդկանց շարժումների—այն ժամանակ այսպիսի գործերում իսկի դեր չէր խաղում—մարդիկ կովում,

[4] Ж.—П. Сартр, Экзистенциализм—это гуманизм, М.,-Л.,. 1953,. с. 29.

քարոզում ու երգում էին, որովհետև այդպես էին հավատացած, այդ էր ճշմարտությունը... Այժմ... կյանքը միայն փողի, փողի ձգտումն էր» (Հ, 147, 153)։ 1895 թ. մի քանի օրվա տարբերությամբ կատարված գրառումներով (հունվարի 5, 23) էլ նա մարդ-էակի զգայական նուրբ ելևէջների բազմահարուստ ընկալմանն էր ձգտում. «Ես ուզում եմ շատ խիստ իմանալ արդյոք ի՞նչ տեսակ զգացմունքներ կան նեգրի, մի բանաստեղծի, մի փիլիսոփայի, մի բուշմանի, մի երգչուհու մոտ... և ի՞նչ տարբերություններ կան...։ Մի՞թե... իմ զգացմունքների պես չէ» (Հ, 159, 153)։ Երիտասարդ Իսահակյանի այս մտորումները՝ բյուրազգի ու հոգնասեռ մարդկանց զգացածն ու վերապրածը սեփական ես-ով չափելու, նրանց ընդունած ու ճանաչած աշխարհը ընկալելու հակվածությունն ունեն հոգեհարազատ Գ. Նարեկացու «Մատյան ողբերգությանը» (բան ԼԲ, ա)։ Ակնհայտ են այս որոնումների լայն ընդհանրությունները և համաշխարհային գրականությանը՝ Ու. Ուիթմենի աշխարհը սեփական ես-ով ճանաչելու հզոր կարողությունը։ Ամերիկացի բանաստեղծը «Երգ իմ մասին» պոեմում գրում է.

Քաղաքը քնած է, և ոյուղերը քնած են,
Բոլոր ապրողները քնած են,
Նրանք բոլորը ներհոսել են իմ մեջ և ես ներհոսում եմ նրանց մեջ,
Նրանք բոլորը ես եմ[5]։

Իսահակյանի ինքնաճանաչման ընթացքը ծայր է առնում սեփական ես-ից, և հետաքրքիր է, որ օրագրի առաջին էջերում «կողքից» նա դիտարկվում է իրեն և ուրույն եզրակացության հանգում. «Ես ուզում եմ ուսումնասիրել, թե արբեցած դրության մեջ ի՞նչ զգացմունքներ, մտքեր, իղձեր են տեղի ունենում...» (Հ, 24)։ Օրագրի հեղինակի ես-ն այստեղ ներկայանում է երկակի էությամբ, ասել կուզի, երբ մի կեսը քննության է առնում մյուս կեսին։ Մարդ արարածի հոգեբանական նման իրավիճակները նորություն չեն ո՞չ համաշխարհային, ո՞չ էլ ազգային գրականության մեջ։ Աննա Կարենինան, օրինակ, աղջկա ծնվելուց հետո ամուսնուն բացատրում է. «Բայց իմ մեջ ուրիշն էլ կա, ես վախենում եմ նրանից»[6]։ Նման հոգևոր իրավիճակներ կան և՛ Ու. Ուիթմենի («Խոտի տերևները»), և՛ Գ. Սևակի («Եղիցի լույս») ստեղծագործություններում։ Օրագրում հեղինակը, Տոլստոյի հերոսուհու նման, խոստովանում է իր երկատված վիճակը. «Իմ մեջ միշտ երկու մարդ է ապրել. մեկը նորմալ, գործող, սովորող, հետաքրքրվող, ուրախացող, ապրող, մյուս մասը՝ տխուր, անգործ, միշտ սևեռուն... խանգարող և մեղցնող» (Հ, 329—9)։ Սա 1915 թ. եղեռնից հետո կատարված գրառում է, սակայն թվում է, նման հոգեվիճակի վկայություններ են նրա՝ դեռ ստեղծագործական առաջին տարիներից ծայր առնող գնության ծայրահեղ բևեռացված ընկալումը՝ ներկա նաև օրագրում։ Մի դեպքում՝ «Տոթը այրեց, վարդը անուշ— նա թառամեց առերես։ ...Ահա՛ անձրև, թովիչ զեփյո՛ւռ, վարդը փթթեց ու բուրեց...»[7], «Ցուրտ է օրը-բո՛ւք ու խավա՛ր, Քամին շաչում, շառաչում... Լրռեց քամին. շողով շաղով Շողաց արև, փայլեց օր...»։ Օրագրում արդեն՝ «Աստղերն ինձ երգ էին ասում առաջ, ծաղիկները բուրում էին. երկիրը ես էի պտտցնում, և արևը ես էի վառում... Հիմա՞... Հիմա նա հսկա մեռել է, ո՞ւր թաղել...» (Հ, 285—6)։ Հատկանշական է, որ դեռևս վաղ տարիների (1894 թ. նոյեմբերի 13) գրառումներում Իսահակյանը նույնիսկ

5 Ու. Ուիթմեն, Листья травы, М., 1982, с. 62.

6 Л. Толстой, Юбилейное издание, т. 18, М., 1956., с. 434.

7 Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1973, էջ 5։ Այստեղ բնագրին կից հատորը կնշվի հռոմեական, իսկ էջը՝ արաբական թվանշաններով։

նման հոգեվիճակը, ինչպես ոչ միայն ժամանակի սոցիալ-հասարակական կացությամբ, համարում է ուրույն դիմակայման միջոց, և ոչ միայն նախընտրելի, այլև՝ պարտադիր. «Ո՞վ մարդ, փակվիր քու սենյակում, մտածիր ու կշռիր, ստեղծիր ու կասկածիր, տանջվիր ու հերքիր, հերքիր և՛ մորալ, և՛ էսթետիկ, և՛ կյանքի նպատակը.—բայց երբ ոտքդ դնում ես քու սենյակի, քու արբանի շեմքից դուրս՝ իսկույն մոռացիր քեզ... հեռու փիլիսոփայությունից ու մտածողությունից...» (Հ, 90)։ Դրողի երկակի էությունը օրագրում արդեն ներքին, ենթատեքստային վիճքով է ներկայանում խորհրդային Հայաստանում։ «Հիշատակարանում» առկա է նման այլ իրողություն ևս. սեփական աչքի զգացված ու վերապրած ցավն ու կարոտները, հոգևոր աշխարհը «կողքից» դիտելու, քննելու ժամանակ փոխվում է նաև գերանվան դեմքը՝ առաջինի փոխարեն՝ երրորդ։ Այս է հավաստում 1896 թ. փետրվարի 17-ի գրառումը. այն սկսվում է ես-ի քննությամբ, ծավալվում առաջին դեմքով, հատվածի հաջորդ մասում արդեն նույն խորհրդածությունները ներկայանում են երրորդ դեմքով։ Եվ քանի որ տրամադրության, ասելիքի և հոգեվիճակի որևէ փոփոխություն օրագրի հերոսի մեջ չի կատարվում, ուստի կատված չի հարուցում, որ խոսքը կրկնորդի ներքին կացության արձանագրումն է։ Հատկանշական է այստեղ մի, թերևս անկարևոր, մանրամասն ևս. հայրենիքում կատարված այդ գրառումներում վերարտադրվում են օտար ափերում գտնված ժամանակվա իր ապրումները, ասել կուզի՝ ժամանակային այլ կտրվածքներն են համադրվում։ Սակայն ինչպես գտնում է գերմանացի մեծ մտածողը. «Տարբեր ժամանակները նույն ժամանակի էության սոսկ տարբեր մասերն են»[8]։ Տիեզերքի չափ բարդ, խորհրդավոր ու առեղծվածային մարդ-էակի ներաշխարհի քննությունը ծայր է առնում սեփական ինքնազննումից, և Իսահակյանի «Հիշատակարանում» ասես «ափի մեջ» ներկայանում է հեղինակի ես-ը ուրախության, ցավի, վշտի, սառապանքի պահերին՝ դիմանկարի յուրօրինակ վրձնում, որ տանանմյակներ անց հանդիպում ենք Պ. Սևակի «Մարդը ափի մեջ» գրքում։ Իսահակյանի օրագրում, սակայն, այն անձնական գերանվան առաջին դեմքով է սկսվում. «Ես սիրում եմ...» (Հ, 90), «Ես ատում եմ ու զզվում...» (Հ, 97), «Ես վերք ունեմ...» (Հ, 107), «Ես լացեցի արյուն ու թարախ» (Հ, 128), «Ես ոգևորված եմ...» (Հ, 115), «Ես չեմ ընդունում ներկա մորալը...» (Հ, 285), «Ես շարունակ երգում եմ...» (Հ, 110), «Ես բարկացած եմ...» (Հ, 118), «Ես ունեմ համաշխարհային վիշտ...» (Հ, 179)։ Նման ինքնազննումները, համարյա միշտ, ավարտվում-ամփոփվում են հեղինակի հզոր ընչի ու մտքի պոռթկումներով և այստեղ արդեն սեփական դոյը տիեզերականի անքակտելի մասնիկը զգալու և վերապրելու իսահակյանական կարողությունն է ի հայտ գալիս՝ աշխարհընկալման տիեզերական չափանիշներով հոգեհարազատ Ու. Ուիթմենին. «Մեծ է իմ սիրտը և տիեզերք է, անթիվ աստղեր, երկինքներ ու արևներ կան այնտեղ» (Հ, 214), «Տիեզերքի չափ տանջվում եմ...» (Հ, 209)։ Երբեմն օրագրի հեղինակի նույնօրինակ լեզվատաղծով մտորումները ներկայանում են և իբրև բանաստեղծություն, ինչպես այս դեպքում. «Ի՞նչ եմ ես-ոչնչություն, խեղճ, ողբալի, ճղճիմ... Բայց իմ տառապանքը, իմ վիշտը, իմ գայթակղությունները... տիեզերքի մեծության հանդեպ-ավելի մեծ են, անեզր, ծանր են, քան աստղերը լույսը, քան տիեզերքը...» (Հ, 433)։ Չափածոյում արդեն ես-ի մտատանջությունները, խորհրդածությունները լայն ընդգրկմամբ, ընդհանրապես մարդ-էակին են վերաբերում.

Ոչինչ է մարդը՝ փոշի փոշու մեջ,
Իր ցավը, սակայն, տիեզերքից մեծ (I, 374)։

---

[8] И. Кант. Критика чистого разума. СПб., 1907, с. 49.

Ներքնապես հպարտ ու ինքնիշխան, հոգևոր մեծությունը տիեզերական ծավալումներով չափող Իսահակյանը ստեղծագործելու կարողությունը աստվածաշնորհ ընտրյալների պարգև էր համարում և մարգարեների անվախ ու աներեր կեցվածքով հավաստում գալիք «Ոգու սովի» մասին՝ հրեղեն հայացքով տեսնելով «վեհ... խոսքի» վշրանքների համար ծովեծով ճամփա ելած հոծ զանգվածներին։ Անպայման այս հանգամանքը նկատի ուներ «Հիշատակարանի» հեղինակը, երբ անհատին գիտելով հոգևոր-ֆիզիկական ներդաշնակությամբ՝ նրա գնահատման չափանիշը առնչում էր հոգևոր կատարելությանը՝ խորքին. «Խորություն՛, խորություն՛, խորություն՛—ահա՛ այս է մարդու արժեքը» (Հ, 155)։ Թերևս կրկնվող բառերը, իմաստն առավել շեշտելուց բացի, հեղինակի առարկությունն մերժող տոնն են միաժամանակ շեշտում։ Այնուամենայնիվ, Իսահակյան-անհատին հասկանալու յուրօրինակ բանալի է թվում նրա հետևյալ խոստովանանքը. «Ես պիտի երրորդությունից կազմված լինեի. երրորդություն և միասնություն. երեք հոգի, երեք անձ իմ մեջ, որպեսզի մի «Ես»-ս միայն քեզ աներ, պաբաբ շրջեր, ելներ, ճամփորդեր, ուտեր, խմեր, մանգար ու կանանց գրկեր։ Երկրորդ «Ես»-ս ամբողջ օրը կարդար ու գրեր, ուսումնասիրեր, խակ երրորդ «Ես»-ս հասարակության մեջ գործեր-կռիվ, պայքար, կուսակցություն, ծեծ ու դմբոց, պրոպագանդ, գործ, վեճ, կռիվ...։ Այն ժամանակ միայն ես կզգայի ինձ բախտավոր և ամբողջ ու բաշխարարված»[9]։ Ոգեմիաբանությունը խորհրդանշող այս մտայնությամբ էլ շարադրված է Իսահակյանի «Հիշատակարանը»՝ մարդը ճամփորդել սիրող, ուսանողական տարիների սոցիալական ծանր կյանքով ապրող, տղամարդը՝ Շուշանիկի հանդեպ տածած վերերկրային զգացմունքներով, ապագայի երազներով ու ունչերով։ Երկրորդը մտածող, խորհող, ստեղծագործող Իսահակյանն է, արվեստագետը, և վերջապես հայրենիքի ազատության համար պայքարող մարտիկը՝ զենք փոխադրող, ժողովրդին ազատության պայքարի կոչող։ Օրագրային գրառումներում առանձին-առանձին մարդը, ստեղծագործողն ու մարտիկը յուրօրինակ ներդաշնակությամբ են ներկայանում հետևյալ ինքնախոստովանանք-ինքնաբնութագրման մեջ, որը ծավալվում է Իսահակյանի վերը նշված երրորդությամբ. «Ես այնպիսի հոգով եմ ծնվել, որ իմ մեջ միակ երջանկությունը թափառական-արկածական-բանաստեղծական-ռոմանտիկ կյանքն է։ Ես կհագնեմ ճամփորդի ռոմանտիկ շորեր. ես կլինեմ ասպետ, սարեր ու ձորեր մանգ կուգամ, աշուղների ու հովիվների մեջ, ձկնորսների ու որսորդների մեջ, ավազակների ու հայդուկների հետ։ Ես կքարոզեմ ու կսովորեցնեմ նրանց... Հետս կունենամ թվանք ու զենք՝ մի տեսակ Դոն-Քիշոտ կլինեմ-օրինակ՝ Մուրատ-բեկ (կամ Աղասի բեկ Մանբաշեցի)... կբրեմ ոտանավորներ ու արկածներ ու ժողովրդի երգն ու էլանքը... Այսպես թափառական կապրեմ, մինչև որ կանցնեմ Հայաստան, կկռվեմ ու կռվում հինվորների հետ կընկնեմ։ ....Որ հիշում եմ Շուշիկին ու կորցրած սերս, սիրտս լցվում է տաք արնով, հետո գնում ճակատս, ու սկսում է սաստիկ նեղվել սիրտս ու քրտինք տալ վրաս-շա՛տ եմ տանջվում...» (Հ, 105—6)։ Օրագրի հեղինակի մարդկային, անհատական նկարագրին, խառնվածքին ու հակումներին ներհյուսված, ինչպես այստեղ, այնպես էլ ողջ «Հիշատակարանով» մեկ ներկա են և Ռուսոյի՝ մարդկանց պարզ և բնական կենցաղի կոչող կարգախոսը, պայմանավորված նրանց փոխհարաբերությունների մեջ քաղաքակրթության խաղացած բացասական դերով, և երևի թե ուսուցչությամբ զբաղվելով[10] փիլիսոփա Կանտին հետևելու հակումը։ Հետաքրքիր է նաև, որ հեղինակի խոստովանած եռատված վիճակով էլ, նրանցից յուրաքանչյուրը առանձին-առանձին երբեմն էլ ճշտում, լրացնում է մյուսին։ Այստեղ, օրինակ, ստեղծագործող Իսահակ-

---

9 ԳԱԹ, Իսահակյանի ֆ., 11—II։

10 Տ. Գաուլսեն, Էմմանուել Կանտ, Վաղարշապատ, 1904, էջ 8։

յանը հորդորում, խրախուսում է մարդուն. «Ես զուր եմ հուսահատվում, Արհամարհե՞մ հասարակաց կարծիքը, ընդունե՞մ ինքնապաշտպան դիմակներ ու դրություններ և զգևորվեմ իմ նպատակներով՝ ստեղծեմ նշանավոր հանճարեղ երկեր, երկնեմ երդեր, ծնեմ երկեր...» (Հ, 244-5)։ Իսահակյան-անհատի դիմանկարի լիարյուն և ամբողջական վրձնմանը, սակայն, անհարիր է նման մոտեցումը. նրա մարդկային էության, հոգեբանության ներդաշնակ վերհանումը պարտադրում է նրա «Ես»-ը քննել ու ներկայացնել առանց նման տարանջատումների։ Իսկ սեփական «Ես»-ը Իսահակյանը հետևյալ կերպ է ներկայացնում օրագրում՝ միշտ ուրույն, ինքնատիպ, առանձնահատուկ։ Օրագրային առաջին տարիների գրառումների վկայությամբ գործ ունենք սեփական ես-ի ինքնահաստատման դժվարին ճանապարհ ելած, համառ ու հետևողականորեն կատարելության ձգտող մարդէակի հետ։ Նրա ինքնատիպությունն են շեշտում անձնական դերանվան հետ ստացական հոդի գործածությունը «մի» թվականով և «ինքը» դերանվան հիմքով կազմված և միմյանց հաջորդող նույնիմաստ բառերը. երկրորդվելը արհամարհող, սեփական դեմքի ու անհատականության հաստատումով. «Ես սիրում եմ ինքնուրույնություն, միապետ, միահեծան, ինքնիշխան, ինքնագնաց, ինքնասպան, ինքնահույս, ինքնագործ, ինքնազգաց, ինքնախոհ» (Հ, 45)։ Այս ամենից հետո արդեն հասկանալի է դառնում պոռթկման մի պահի նրա խոստովանանքը. «Ես ի՞նչ 'եմ անում աստվածները, երբ ես աստված եմ» (Հ, 174)։ Անկրկնելի, միակ, զորեղ ու ինքնիշխան ես-ը բարձրանում է աստվածության աստիճանի, ոչ միայն իր եզակի գոյությամբ, այլև ստեղծող, արարչագործ էությամբ։ Մարդ-արարածի մասին մտորումներում էլ, քամահրելով բարեկեցությամբ, սոսկ նեղ, շահադիտական 'ու նյութապաշտ նկրտումներով առաջնորդվելը, նա հոգևոր-բարոյական, մարդկային բարձր նկարագրի տեր անհատին նկատի ուներ, նրան էր ընդունում՝ կառուցող, արարող, գաղափարի մարդուն։ Իսահակյանը շրջանցում է «նյութի ուժով» իրենց երջանիկ համարող և հանուն բարեկեցության դավանած սկզբունքներից հրաժարվող, խիղճը նյութով վաճառող մարդկանց, որոնք իրենց հոգևոր աղքատության պատճառով «...ժամանակավորը առավել բարձր են դասում բացարձակ արժեքներից»[11]։ Մարդու բարոյական նկարագրի արծարծումներով, դիմակավոր, անբարոյական անհատի և հասարակության մերկացումներով, մարդկային բոլոր չափանիշները «ոսկե հորթին» հանգեցնող իսահակյանական քննադատությունները շարունակվում են Պ. Սևակի ստեղծագործություններում՝ 50—60-ական թվականներից սկսած, և հանգում «Հանեցե՛ք ձեր դիմակները, Որ գեթ մի քիչ դյուրին շնչել կարողանաք»[12] մտայնությանը։ Բարոյական մարդ-արարածի որոնումները Պ. Սևակին հատկապես զբաղեցրել են «Մաղրածուն», «Խաղալիքներ սարքողը», «Դիմակահանդեսի գլխավորը», «Իրերի բնությունը» ստեղծագործություններում։

Ես-ից դեպի անհատականություն ձգվող դժվարին ու տառապալից ճանապարհը Իսահակյանը, դեռ պատանի, առնչում է կամքին։ 1893 թ. մարտի 25, հինգշաբթի գրառման մեջ, օրինակ, անդրադառնալով սեփական մարդկային թուլություններին, հավաստում է. «...Շա՜տ-շա՜տ թույլ բնավորություն ունեմ. հազար անգամ աշխատել եմ այդ թուլությունը ջնջել, չի հաջողվել, օրինակ ես ծածկամիտ չեմ, շատ բացբերան եմ, այնպես որ ամեն բան պարզությամբ ասում եմ մարդկանց, և այդ պարզությունից ես շատ եմ վնասվել» և եզրակացնում՝ «Ահա՜ կամքի թուլություն...» (Հ, 37)։ Մարդ արարածի անհատականության վերածման գործում կամային գործոնի այդօրինակ մեծ տեղի ու դերի վերապահումը հուշում է գերմանացի

---

[11] Н. Бердяев, Опыты философские, социальные и литературные (1900—1906), СПб., 1907, с. 378.

[12] Պ. Սևակ, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. II, Երևան, 1972, էջ 58։

փիլիսոփա Ա. Շոպենհաուերի հանդեպ ունեցած նրա կողմնորոշումը։ Նշանավոր մտածողի փիլիսոփայությունը ձևավորվել է 1819 թ. լույս տեսած գլխավոր երկում՝ «Աշխարհը որպես կամք և պատկերացում», ուր հեղինակը աշխարհի էությունը հանգեցնում է կամքին։ Իսահակյանի «Հիշատակարանում» ակնհայտ է գերմանացի փիլիսոփայից խոր աղդվածությունը, հատկապես նշված աշխատության երկրորդ հատորի (1844 թ.) 44 և 46 գլուխներից՝ «Սեռական սիրո մետաֆիզիկա» և «Ոչնչության և կյանքի մորմոքի մասին»։ Սակայն հարկ է հիշել, որ Ա. Շոպենհաուերի և Ֆ. Նիցշեի փիլիսոփայության խոր գիտակ Ավ. Իսահակյանի ես-ը արմատապես տարբերվում է նրանց՝ իշխանության ու լիաոքի ձգտող, սառն ու բանական, մարդ արարածին ստորացնող ու ոտնահարող ասերից։ Իսահակյանի ես-ը օրագրում մարգասեր է, մարդ-էակի ցավերը հասկացող ու տառապող անհատ, որի կյանքի նպատակը բարօրությունն է, հանուրի համար զոհաբերվելը, լույս տալով սպառվելը. «...Թողեք լույս տամ առաջ, արևի պես, կայծակի պես այրվեմ...»[18] (2, 107)։ Նրանց էական տարբերությունը արդեն առավել ակնհայտ է ներկայանում հայ գրողի՝ խոշտանգված հայրենիքի համար ապրած ողբերգությամբ։

Երիտասարդ Իսահակյանը, տարիքին բնորոշ անմիջականությամբ, ձգտում էր ժամանակի մեծ մտածողներին նմանվել և անձնական կյանքում, արձանագրելով, որ չի ամուսնանալու Կանտի, Շոպենհաուերի, Նիցշեի նման։

«Հիշատակարանում» ես-ի մարդկային կատարելության ու հոգևոր ներդաշնակության ձգտող հակումները, որ ազգային գրականության մեջ հոգեհարազատ են Խ. Աբովյանին, կրում են Գյոթեի և Կանտի ազդեցությունը։ Մեծ փիլիսոփայի «Զուտ բանականության քննադատություն» (1781 թ.), «Գործնական բանականության քննադատություն» (1788 թ.), «Դատողության ունակության քննադատություն» (1790 թ.) աշխատությունների բարոյական օրենքի խոր ներգործությունը բազմիցս ներկա է «Հիշատակարանի» տարբեր տարիների գրառումներում։ Օրագրի ես-ը Կանտյան բարոյական բարձրագույն սկզբունքների հետևորդն է, բարձր գաղափարներ դավանող, սեփական պարտավորությունները ճանաչող և կատարող անհատ, օրինապահ անձնավորություն։ Գերմանացի փիլիսոփան, բարոյականությունն առնչելով բանականությանը, այն համարում էր մտքի զուտ ապրիորի ձևեր, պահանջում մարդկային փոխհարաբերությունները հիմնել այդ օրենքների վրա, քանի որ միայն դա է ապահովում յուրաքանչյուրի ցանկացած արարքի բարոյական կողմը։ Ավելին, նա այն պարտադիր համարելով ընդհանրապես մարդ էակի համար՝ ակնածալից ու հարգալիր վերաբերմունք էր պարտադրում այդ օրենքների հանդեպ։ Օրագրում հատկապես շատ են պարտքի և իրավունքի հավասարակշռության մասին արծարծումները և հասարակության հանդեպ ունեցած պարտքի Կանտյան բարոյական օրենքի ազդեցությամբ է, կարծես շարադրված օրագրի հետևյալ հատվածը, ուր հեղինակը որոշակի սահմանագծով բաժանում է գիտական և տարիքային գործոններով պայմանավորված սեփական՝ այն արարքները, որոնց համար մի դեպքում ինքը պատասխանում է, այլ դեպքում ոչ. «Ես երբեք ինձ չեմ դատապարտի այն գործերի ու հանցանքների համար, որ գործել եմ մինչև 15—16 տարեկանս։ Այդ հանցանքներին ես պատասխանատու չեմ, այլ մայրս ու հայրս, եղբայրներս, բարեկամներս և շրջապատս են մեղավոր։ Ուսուցիչներիս անշնորհքությունն է մեղավոր, <մեր> երկրի կյանքն է մեղավոր, իսկ այնուհետև, երբ ես անկախ եմ մտածել.

---

18 Այս մտայնությունը հոգեհարազատ էր նաև Ե. Չարենցի «Ուրնյակներ արևին» շարքին. «Ինչ որ լավ է՝ վառվում է ու վառվում» բանաստեղծության մեջ Չարենցը հավաստում է. «Այս ա՜րև, այս վառ աշխարհում քանի կաս՝ վառվի՜ր ու գնա՜» (Ե. Չարենց, Երկերի լիակատար ժողովածու 4 հատորով, հ. I, Երևան, 1986, էջ 194)։

...Այդ օրվանից ես իմ հանցանքների պատասխանատուն եմ... Անցյալում ես այլ մարդ էի, նա Ավ. Իսահակյանը չէր... Իսկ ես այժմ իմ գլխի տերն եմ, ես այժմ Ավ. Իսահակյանն եմ» (Հ, 156—157)։ Օրագրի հեղինակը որոշակի պատասխանատվության զգացում ուներ և՛ շրջապատի, և՛ հարազատների, և՛ օտար լծի տակ գտնվող տարաբախտ հայրենիքի հանդեպ։ Սակայն, ի տարբերություն կանտյան բանական-խորհող մարդ-արարածի, «Հիշատակարանի» ես-ը առավել զգայական-հուզական անհատն է, և այս են հավաստում հատկապես 1915 թ. մինչև 1924 թ.՝ հայրենիքի օրհասական կացությամբ պայմանավորված ողբերգական ապրումները, հայրենիքի համար ապրած հոշոտող ցավն ու տառապանքը։ Սակայն, թվում է, տանջանքի, տառապանքի հոգեբանությունը նկատելի է օրագրի հեղինակի առաջին իսկ գրառումներից, ասել կուզի՝ այն բնորոշ է Իսահակյան անհատի մարդկային հոգեբանությանը. շրջապատը, մեծ աշխարհն անցուդարձը ծանր, ողբերգորեն վերապրելու զգացողությունն ու կերպը[14]։ Սա զգացվում է նույնիսկ ոչ միայն հայրենիքի, կորցրած մեծ սիրո մասին խորհրդածություններում, այլ առօրյա մարդ-հասարակություն փոխառնչություններում. «Ա՜խ, երբեմն կյանքը շատ անտանելի է լինում... նա ուզում է միայն շրջապատից... Տեսնում ես դուքաններ, լիքը ապրանքներ, որոնք դեմ են քու հայացքներիդ-տեսնում ես ու տանջվում, տեսնում ես ղանազան մարդիկ, որոնք ծիծաղում են, հրհռում... այդ մարդիկ դեր են, պարարտ են, լավ են հագնված, քաղաքավարի են, թրաշված, դեղ քսված-զայրանում ես ու ուզվում, տեսնում ես կանայք-հիմար-զայրանում ես ու ուզվում։ Անցնում ես մի տեղից՝ վրդ ծաղրում են, միմիկայով բան են հասկացնում-վիրավորվում ես ու ուզվում, տեսնում ես-շորիդ, շարժվածքիդ վրա ծաղրում են-ուզվում ես, նույնպես ուզվում ես, երբ նրանց շարժումները դուր չեն գալիս... վերջապես մարդկանց մեջ շարունակ ուզվում ես[15]...» (Հ, 80—81) (ընդգծումները մերն են—Մ. Զ.)։ Հոգևոր այս տառապանքը հաճախ էլ վերածվում էր ֆիզիկականի. «բժիշկների ասելով մելանխոլիա եմ...» (Հ, 265)։ «Հիշատակարանի» վկայությամբ Իսահակյանի անհատական խառնվածքին բնորոշ է և հետևյալ իրողությունը։ Առաջին հայացքից թերևս անհիմն է թվում այն փաստը, որ տրամաբանությանն, ապացուցման օրենքները որոշակի կախում ունեն մարդ արարածի սեռի գաղափարից։ Մարդկային հոգևոր նկարագրով պայմանավորված՝ երկու սեռի ներկայացուցիչները տարբեր օժտվածություն ունեն. տղամարդու միտքը քննող է, զննող ու հետազոտող, և այդ կերպ է նա թափանցում բնության գաղտնիքների խորքը, իսկ կանանց ճանաչողությունը տեղի է ունենում զգայությունների միջոցով։ Սակայն վերջինս ընդունում և ըմբռնում է, և ոչ հաստատում, այսինքն՝ բնազդային ներհայացեկանություն՝ վերլուծության փոխարեն։ Այս երևույթը առավել շեշտված ձևով առկա է սիրային ապրումներում։ Մեծ անհատականության տեր, զիտական զորեղ մտքով օժտված տղամարդկանց մտածողությունը երբեմն իր մեջ է ներառնում կանացիականը, «առանց վերջինս սեփական բանական սկզբին են-

---

14 Գրականագետ Լ. Հախվերդյանի վկայությամբ նմանօրինակ մարդկային խառնվածքով էր օժտված Պ. Սևակը. «...նրա հուզական աշխարհում բույն էր դրել աշխարհը ողբերգականորեն վերապրելու մի հազվագյուտ զորություն» (Լ. Հ ա խ վ ե ր դ յ ա ն, Պարույրը, Երևան, 1987, էջ 32)։ Մ. Ոիլկու հավաստիացմամբ նման անհատականություն էր նաև Ա. Միցկևիչը. «Բացառիկ... դյուրազգացությունը... չնչին բանը նրա համար ֆիզիկական ուժասպառության հանող անտանելի տանջանք էր» (Л. М и ц к е в и ч, Лирика, М., 1963, с. 10)։

15 Տառապանքի այս ինքնախոստովանանքը հիշեցնում է Ալֆրեդ դը Վինյիի խորհրդածությունները։ Նա կյանքի ճշմարտությունը հանգեցնելով տառապանքի ու մահվան՝ բանաստեղծներին համարում էր աշխարհի ամենատանջված անհատները («Ստելլո» վեպը, «Չատերտոն» դրաման)։

թարկելու։ Հասարակական մշակույթի այդպիսի ներկայացուցիչներից են Դանտեն, Շեքսպիրը, Գյոթեն»[16]։ Ազգային գրականության այդպիսի երևելիներից է Ավ. Իսահակյանը։ «Հիշատակարանում», այնուամենայնիվ, օրագրի հեղինակը կողմնակից է զգայական-բանական ներդաշնակ խառնվածքի տեր անհատին՝ մերժելով առանձին-առանձին և՛ մեկը, և՛ մյուսը, «սառը մտքի հետ այրող զգացմունք» (2, 68)։

Օրագիրը և մյուս ստեղծագործությունները ցույց են տալիս, որ Իսահակյանին խորապես զբաղեցրել են և սոցիալական հարցեր։ Կյանքի, աշխարհի աններդաշնակությունը ծանր վերապրող օրագրի հեղինակը ծառս է լինում քաղաքակիրթ աշխարհի այն օրենքների դեմ, որոնց առջև կանգնած է անպաշտպան, անօգ մարդ-արարածը, և եթե մի դեպքում, պոռթկման մի պահի ներկայանում է ամեն ինչ մերժող ու ժխտող կեցվածքով («Աբու-Լալա Մահարի»), ապա «Հիշատակարանում» ինչպես ժխտող, այնպես էլ «մուրճի կամ զնդանի» համակերպվող տրամադրություններին ներհյուսված [«Ի՞նչ ես զազազում, իմ վիրավոր սիրտ, Որ զազազում ես, ի՞նչ պիտի անես, Աշխարհը իրեն ճամփով կընթանա, Դու խեղճ, դու անզոր, ի՞նչ պիտի անես» (1, 170)], ներկա է իր ցանկություններն ու իղձերը երազով, տեսիլքով իրականացված տեսնելու և այդ ձևով հոգևոր բավականություն ու վայելք ապրելու զգացողությունը. «Ես երազ տեսա։ Փրկության ոգին ամբողջ երկրի երեսից սրբեց, քերեց և հավաքելով բոլոր փողը՝ ոսկին ու արծաթը, լցրեց մեծ օվկիանոսը, Խաղաղ օվկիանոսը... Հուզվեց ալեկոծվեց Խաղաղ օվկիանոսը և արյունով ներկվեց, ողջ օվկիանոսը կարմիր դարձավ... լռեց աղմուկը... մարդիկ հանգստացան, աշխարհը ազատվեց...» (2, 265—266)։ Ստեղծագործական մահողացմամբ հարազատ ազգային տեսլային ավանդներին (Սիամանթո, Չարենց), հեղինակը սոցիալական անարդարությունների հիմքում դարերից եկող ճշմարտության է հանգում. «...Ամեն չարութիւններուն արմատը արծաթասիրութիւնն է»։ Իսահակյան-մտածողի՝ հասարակության սոցիալական անարդարության մասին խորհրդածություններն ու պատկերացումները, սակայն, օրագրում սոսկ վերացական ցանկություն, դատողություններ են՝ առանց որևէ որոշակի ծրագրի։ Կանտի էսթետիկայի սկզբունքները որդեգրած հեղինակի սոցիալ-բարոյական համոզմունքների յուրօրինակ ամփոփումն է «Իմ ուխտը» գրառումը, ուր կյանքի գոյատևման պայքարում իր տեղն ու դերը ճշտած հեղինակը՝ անազնիվ պայքարի դեմ՝ ոտքի ելած մեծ մարդասերը, այստեղ ներկայանում է իբրև մարդկության առաջադեմ մտքի, քաղաքակրթության հազարամյա պայքարի շարունակողը՝ հոգեհարազատ ազգային միջնադարյան մտածողներին։ «Հիշատակարանում» ներկա են հեղինակի ուրույն պատկերացումները նաև մարդու ազատության մասին։ Նա մարդ-անհատի գոյության նախապայմանը, պայմանավորված սեփական ազատատենչ նկրտումներով, առնչում է նրա ներքին և արտաքին ազատությանը։ Այս առումով ազգային գրականության հոգեհարազատությամբ հանդերձ, մեր կարծիքով, այն, թվում է, առավել առնչվում է եվրոպական ազատասիրական մտայնությանը, որի ամփոփումն է «Մարդու և քաղաքացու իրավունքները» ֆրանսիական բուրժուական հեղափոխության հռչակագիրը, որի հիմքում ընկած էին Մոնտեսքյոյի, Վոլտերի, Ռուսոյի, Կոնդորսեի գաղափարները։ Համաձայն դրա՝ բոլորը ազատ են ծնվում և իրավունք ունեն հավասարապես օգտվելու ազատության սրբազան իրավունքից, քանի որ կյանքն անարժեք է առանց ազատության։ Ազատության նման ընկալման գործում անպայման որոշակի տեղ ու դեր ունի օրագրի հեղինակի եվրոպական կրթությունը։ Թերևս այս հանգամանքն են հավաստում և «Հիշա-

---

[16] B. Higgins, The Seventh Enemy The Human factor in the Global Crisis London, 1978, p. 303.

տակարանի» հեղինակի, և Գ. Հաուպտմանի «Միայնակ մարդը» ստեղծագործության հերոսուհու՝ Աննայի, ազատության մասին ունեցած նույն պատկերացումները։ Մի դեպքում. «Ա՜խ. ազատություն, ազատություն։ Պետք է ազատ լինել բոլոր առումներով։ Չպետք է ունենալ ո՛չ Հայրենիք, ո՛չ ընտանիք, ո՛չ բարեկամներ[17]...», իսկ Հայ գրողի Երագրում ազատության գաղափարը վեր է դասվում բառացիորեն ամեն ինչից. «Ա՜խ, ազատություն-չունենալ ո՛չ տուն, ո՛չ սեփականություն, ո՛չ ընկեր, ո՛չ ընտանիք, ո՛չ կին, ո՛չ սիրուհի, ո՛չ երեխա, ո՛չ հայրենիք, ո՛չ թշնամի, ո՛չ բարեկամ...» (2. 87)։ Իսահակյանը անհատի ազատության գաղափարը անբաժան է համարում ես-ի ինքնահաստատման ընթացքից, համոզված, որ երբեք «Անհատը անհատից չպիտի կախում ունենա-ո՛չ մի, ո՛չ դրամական, և ո՛չ ուժի...» (2, 76)։ Ազատ պետք է լինի և՛ մարդը, և՛ նրա հայրենիքը։ Գրողը հայրենիքի ճակատագրի մասին խորհրդածություններում մի դեպքում, եղանակով ոգևորված, հոշոտող ցավ է ապրում իր ժողովրդի ապագայի ճակատագրի համար, իսկ 1936 թ. գրառումների ենթատեքստում արդեն զուգահեռաբար ներկա են և՛ կորցրածի մոլորությունը, և՛ հինավուրց փառքի ու խորհրդային ներկայի հակադրությունը, և՛ հայրենի հողակտորը գնչերիկ, հզոր տեսնելու վշտախառն երազանքը։ Իսահակյան մտածողին բնորոշ է մի այլ խորություն. ազգ. օրագրում սոցիալ-քաղաքական, ազգային-ազատագրական պայքարի հարցերից նա բարձրանում և առաջադրում ու պաշտպանում է բանության վերապման գաղափարը ընդհանրապես։

Օրագրում ուրույն տեղ են գրավում հեղինակի կրկնորդի մահվան մասին խորհրդածությունները։ Գյոթեի նման Իսահակյանի մտորումները ևս հանդում են զորեղ ու խորհրդավոր բնության մեջ ապրող թույլ ու չնչին մարդու գոյության փաստին։ Տիեզերքի խորություն ունեցող մարդ էակը, որի կյանքն ասես մի ակնթարթ կամ մի հնչյուն է, անպաշտպան է մահից[18]։ Մարդ-արարածի կյանքի ժամանակավորության փաստը ողբերգորեն վերապրող հեղինակի հայացքը ներկա է օրագրի բազմաթիվ էջերում։ Մի դեպքում նա հավատում է, որ մարդը հավերժ է. տիեզերքի հետ է կենդանի և մահացած ժամանակ, այլ դեպքում նրան հուզում է, թե հյուլե դարձած նա կարո՞ղ է արդյոք տիեզերքում հանդիպել սիրած էակին՝ նույնպես հյուլե վիճակում, երբեմն էլ յուրաքանչյուր երազ կամ ցանկություն համարում սին ու դատարկ՝ պայմանավորված կյանքի վաղանցիկությամբ։ Օրագրում կյանք-մահ զուգահեռը, ինչպես Սայաթ-Նովայի կամ Լ. Տոլստոյի մոտ, ներկայանում է անբաժան ու միաձույլ, կյանքը ընկալվում է որպես մահվան նախապատրաստություն. «Սպասելիս առած ես թափառում եմ...» (2, 219)։ «Հիշատակարանում» զգացվում են Լ. Տոլստոյի «Երկնային թագավորությունը մեր մեջ է» հոդվածի արձարձումների հետքերը։ Մարդ արարածի կյանքը ռուս գրողն ընկալում էր որպես անասնականի և աստվածայինի յուրովի խաչաձևում։ Ինչպես դուստ առաջինը, նույնպես և վերջինը՝ «զուտ Աստծու կամքով կյանքը»[19] նա մարդկային չէր համարում։ Մահվան անխուսափելիությունից առաջացած ողբերգությունը թեվաղրում էր Իսահակյանին արարելով անմահանալու գաղափարը, դեռ վաղ հասակից՝ «Մեծ եմ ուզում լինել...» (2, 74)։ Այլ դեպքում, արդեն հասուն տարիքում խոստովանում է.

Տիեզերքի սահմաններից դուրս գալի,
Ժամանակից, օրենքներից բնության

---

17 Гергарт Гауптман, Пьесы, т. I, М., 1959, с. 177.

18 Բնությունը գոյատևում է մահ-սպանությամբ, իսկ մարդ-էակների հանդեպ նա ոչ թե մարդ է, այլ խորթ մայր մտայնությամբ արդեն գրողի խորհրդածությունները հարազատանում են իտալացի բանաստեղծ Լեոպարդիին։

19 Л. Толстой, Юбилейное издание, т. 28, М., 1957, с. 79.

Անջատվեի, հեռանայի, փախչեի։
Ուժի-նյութի, կյանքի-մահի հարցերից
Ազատվեի, ազատություն շնչեի... (I, 378)։

Տեղին է թերևս հիշել, որ հունական փիլիսոփայական մտքը յուրացրած Ավ. Իսահակյանի «Հիշատակարանում» հանդիպում ենք Պյութագորասից[20] ծայր առնող հոգու վերաբնակեցման տեսության մտայնությանը։ Մարմին-հոգի տարանջատման բազմաթիվ օրինակների կողքին, ահա, այդ տեսության հեղինակային բացատրությունը. «Իմ հոգին-այդ մարդկության մեծ հոգին է, որ հավերժ ապրում է մարդկության, անհատների մեջ. այսօր իմ մեջ է ապրում...» (Հ, 259)։ Կյանքի ժամանակավորության փաստով թելադրված՝ օրագրի հեղինակը հոգևոր անդորր է փնտրում բնության մեջ։ Բնության լռությունը վայելող նրա ես-ը վշտերի, զգացածի, վերապրածի, իր ներաշխարհի հետ էր, որը հոգևոր արարման պահ էր միաժամանակ («Մեծ մտքերը լռության ու մենակության մեջ են ծնվում», Հ, 221), և յուրօրինակ երկխոսություն[21]։

Իրեն բնության մասնիկը համարող հեղինակի կրկնորդը ոչ միայն հոգևոր ներդաշնակություն է գտնում բնության մեջ՝ ձուլվելով նրան, այլև, իբրև վերին ընտրյալներին շնորհված պարգև, հաղորդակցվում նրա հետ. «Ո՜վ մարդիկ, ե՞ս եմ հասկանում լռությունը, որ տիեզերքի լեզուն է։ Տիեզերքը թոթով երգում է, և այդ երգը, այդ վեհ լռությունը, որ ես թափառում եմ ու լսում, հոգումս տարածվում է և ես իմ խոսքից ողջ հասկանում եմ այդ լեզուն-լռությունը...» (Հ, 202)։ Տիեզերական այդ անկրկնելի ու առեղծվածային էակը՝ մարդը, ոչ միայն բնության մասնիկն է, այլև մարդ-բնություն հարաբերություններում ներկայանում է տիրոջ իրավունքով, և պատահական չէ, որ օրագրում հեղինակի ես-ը այլաբանորեն ներկայանում է հզոր, «արևի պես բարձր» թռչող կաղնու կերպարանքով։ Դա արդեն բանաստեղծություններում, ազգային գրականության մեծերին բնորոշ համեմատությունն էր միաժամանակ (Զարենց, Սևակ)։ Անհատ-կաղնի զուգահեռը առավել հասկանալի ու բացահայտ են դարձնում գրողի՝ 1936 թ. գրառումներից ծայր առած ողբերգական հայացքը խորհրդային մարդ-էակի աղավաղված կամ ավերված ներաշխարհի հանդեպ, որի մասին, տարբներ անց միայն, առաջինը խիզախեց գրել Ա. Սոլժենիցինը «Իվան Դենիսովիչի մեկ օրը» պատմվածքում։

Տարիքն առած կենսասեր գրողի հայացքը անցյալի հուշերի հետ էր. «Նոր սիրեի, նոր երգեի... աշխարհը նորից սկսվեր ինձ համար...» (Հ, 446), և պատահական չէ, որ երազով երիտասարդությունը վերագտած գրողը, չնայած համընդհանուր ճանաչման, սիրո ու փառքի, չի համակերպվում իր վիճակին. «...ծերության մեջ-անտարբեր, անհույզ... անսեր, անհրապույր այս տարիքի մեջ...» (Հ, 436)։

Անցյալի վերհուշին միախառնվում են նաև երազները. մերթ անտեսանելի հեքիաթային գլխարկով նա փափագում է ոչնչացնել հայության հին ու նոր թշնամիներին (1950, հուլիսի 28, Կիսլովոդսկ), այլ դեպքում մտովի սահմանից այն կողմում մնացած հայրենիքի հետ է, որի աղեխարշ ցավն ու կարոտը սփյուռքահայ ավագ սերնդի ստեղծագործությունների հիմնական թեման էր նաև, կամ էլ Վարպետը իր կորցրած սիրո ու երիտասար-

---

20 Այդ մասին մանրամասն տե՛ս Э. Целлер, Очерк истории греческой философии, М., 1912, с. 38.

21 Ոչ միայն բնություն-մարդ երկխոսության, այլև մարդ-մարդ երկխոսության ուրույն միջադեպ է վերհիշում Կ. Զուկովսկին Ու. Ուիթմենի կյանքից։ Երբ հիվանդ գրողին այցելած գրչակից ընկերը՝ Խ. Թրոբելը, ողջ երեկոյի ընթացքում բացարձակապես բառ չփոխանակած՝ հրաժեշտի համար ոտքի է ելնում, Ուիթմենը նրան ասում է. «Մենք այսօր լավ զրուցեցինք» (У. Уитмен, Избранные стихи, М—Л., 1932, с. 25).

գության վերհուշին է փարվում (1950, սեպտեմբերի 6, Կիսլովոդսկ)։ Կորցրած սեր, կորցրած հայրենիք։ Եվ պատահական չէ արդեն, որ օրագրային վերջին գրառումը (1956, դեկտեմբերի 27) սկսվում և ծավալվում է բառացիորեն երկու բայով՝ մոռանալ և խաբվել. «Ուզում եմ մոռանալ անցյալս, բոլոր վատ, տխուր դեպքերը, աղետները։ Չհիշեմ, այնպես լինի, որ զգամ՝ որ բնավ չի եղել։ Խաբվել... Խաբեցե՞ք ինձ, բժիշկնե՞ր, խաբեցեք... մինչև վերջին րոպեն, մինչև վերջին շունչ խաբեցեք ինձ.—չիմանամ, որ հիվանդ եմ, որ ծանր հիվանդ եմ, որ չունիմ մռայլ հեռանկար, այլ պայծառ, ուրախ, արևոտ...» (Հ, 450)։ Սա վատառողջ, արդեն մահվան շեմին կանգնած մարդ-Իսահակյանն է, մինչդեռ ստեղծագործողը մտքի հզոր ալացքով մահից մեկ-երկու ամիս առաջ գրված «Մարդու տենչանքն է հավիտյան ապրել» բանաստեղծության մեջ ի մի է բերում տասնամյակներ շարունակ իրեն հուզող հարցերի հարցը՝ մարդու կյանքի էության և իմաստի որոնումները։ Այստեղ բյուրեղացած ձևով ամբողջացվում են շարի և բարու դարավոր պայքարում ինքնամաքրման և ինքնակատարելության ձգտող մարդ-էակի մասին սեփական խոհերն ու մտորումները։ Վարպետը նույն հարթության վրա է դնում մարդուն և գերագույնը, կատարյալն ու վսեմը՝ Աստծուն։ Այս զուգահեռը ազգային գրականության հարազատությամբ հանդերձ (Գ. Նարեկացի), իր մեջ միաժամանակ մեծ խորհուրդ է պարունակում՝ ներկայացնում և ամբողջացնում նաև իրեն՝ Իսահակյան-անհատին։ Մարդուն ներդաշնակ ու կատարյալ տեսնելու, բարու, գեղեցիկի հաղթանակի հաստատման իրականացման համար դարեր ի վեր պայքարի ելած տարբեր ազգերի ներկայացուցիչների ավանդների ներդաշնակն ու ժառանգորդն է նաև ինքը՝ հայ ժողովրդի զավակը՝ մտածող-ստեղծագործողն ու քաղաքացին և մեծ մարդը.

Մարդու տենչանքն է հավիտյան ապրել
Եվ լինել աստված տիեզերաշեն,
Ամենակարող, ամենահզոր
Եվ ամենագետ (I, 382)։

ДВОЙНИК АВТОРА В «ДНЕВНИКАХ» АВ. ИСААКЯНА

М. Г. ЗАКАРЯН

Резюме

Творческая судьба Аветика Исаакяна совпала с трагической судьбой армянского народа с 90-х годов XIX века до середины XX века. Знания поэта основываются на греческой и восточной мудрости, классической немецкой философии, а поиски творческого пути ведут от национальных истоков к мировой литературе—Нарекаци, Гете, Уитмену. В своих «Дневниках» Ав. Исаакян повествует о себе и человечестве, о жизни и смерти, о назначении человека на земле.